## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ (ՊԱՅՄԱՆԱԳԻՐ) N ԻԿՎԾԻԿ-ՄԱԾՁԲ-20/75-1
## 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ N ԻԿՎԾԻԿ-ՄԱԾՁԲ-20/75 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք.Երևան «11» «դեկտեմբերի» 2020թ.

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա.Հայրապետյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և քաղաքացի Մ.Վարդանյանը այսուհետ «Կատարող» մյուս կողմից, հիմք ընդունելով Կողմերի միջև 2020 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված՝ ծառայությունների մատուցման N ԻԿՎԾԻԿ-ՄԱԾՁԲ-20/75 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր), հետևյալի մասին:

### 1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**1.1.** Պայմանագրի հավելված 1-ում նշված «18 Դեկտեմբերի 2020թ.» թվերն ու բառը փոխարինել համապատասխանաբար «25. դեկտեմբերի. 2020թ.» թվերով և բառով:

### 2.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**2.1.** Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**2.2.** Համաձայնագրով չկարգավորված Կողմերի իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով:

**2.3.** Սույն Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Մ. Խորենացու 162ա
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018004821
ՀՎՀՀ 02509478

Տնօրեն ____________ Ա. Հայրապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

Քաղաքացի Մարգարիտա Վարդանյան
ք. Երևան ք. Երևան,Ֆուչիկի փ.,շ 4.,բն. 11
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Անձնագիր AN 0589631
Տրված 26.07.2013թ., 012-ի կողմից
Սոցիալական քարտի համար6503750404
Հ/Հ 163009476033

Քաղաքացի____________ Մ.Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 1*
*2020 թվականի դեկտեմբերի 11 –ին կնքված*
*ԻԿՎԾԻԿ-ԳՀԱՊՁԲ-20/75-1 ծածկագրով համաձայնագրի*

*Հավելված N 1*
*2020 թվականի հոկտեմբերի 12 -ին կնքված*
*ԻԿՎԾԻԿ-ԳՀԱՊՁԲ-20/75 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը |
| 1 | 79211100 | ստորև | ամիս | 334950 | 3 | ք.Երևան, Մ.Խորենացու 162ա | 13.10.2020թ.- 25.12.2020թ. |

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**
**ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կենտրոն) Ծրագրի ֆինանսական պատասխանատուի ծառայությունների ձեռքբերման համար**

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | «Աջակցություն նախկին ազատազրկվածներին՝ դիմակայելու COVID 19 համավարակի ռիսկերին» (այսուհետ՝ Ծրագիր) |
| Պաշտոնի անվանումը | Ծրագրի ֆինանսական պատասխանատու |
| Տևողությունը | Սկիզբ՝ հոկտեմբերի 13, ավարտ՝ դեկտեմբերի 25 |
| Պայմանագրիձևը | Ծառայությունների մատուցման |

## II. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Այս տեխնիկական առաջադրանքի նպատակը Կենտրոնի համար Ծրագրի շրջանակում փաստաթղթաշրջանառության ապահովումը և հաշվապահական աշխատանքների համակարգումն է:

## III. ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

Ծրագրի ֆինանսական պատասխանատուի հիմնական առաջադրանքը ներառում է.
Ա. Ծրագրում ներգրավված թիմի, ներառված փորձագետների հետ աշխատանքների փաստաթղթաշրջանառության ապահովում (պայմանագրերի կնքում և շրջանառում, ծանուցումներ, հանձման-ընդունման ակտերի շրջանառում), ըստ անհրաժեշտության տեխնիկական աջակցության ցուցաբերում:
Բ. Ծրագրի ներգրավված թիմի, ներառված փորձագետների հետ աշխատանքներին առնչվող ֆինանսական գործարքների, հաշվապահական հաշվառման կազմակերպում և իրականացում, ինչպես նաև՝ ընթացիկ իրականացման, արդյունավետության և կատարողականի, առանձին բաղադրիչների վերաբերյալ ֆինանսական համապատասխան հաշվետվությունների կազմում:
Դ. Մասնակցություն Ծրագրի շրջանակում կազմակերպվող քննարկումներին՝ ըստ անհրաժեշտության առավել մանրամասն տեղեկատվության տրամադրում, լրամշակումների և համապատասխանեցումների իրականացում:

## IV. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Ծրագրի ֆինանսական պատասխանատուի աշխատանքի արդյունքը Ծրագրի ֆինանսական գործարքների, հաշվապահական գործառույթների արդյունավետ կազմակերպումն ու իրականացումն է:

## V. ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

| | |
|---|---|
| Կրթություն | Բարձրագույն կրթություն |
| Աշխատանքային փորձառություն | Փաստաթղթաշրջանառության գործընթացի (ֆինանսական ոլորտի աշխատանքների, հաշվապահության) համակարգման առնվազն 3 տարվա փորձառություն: Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման օրենսդրության իմացություն և համապատասխան փորձառություն: Պետական հաշվապահության և ֆինանսների կառավարում, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում նախկինում կատարած աշխատանքը կդիտվի որպես առավելություն: |
| Կարողություններ և հմտություններ | Հայերենի գերազանց իմացություն (գրավոր հաշվետվություններ): Անգլերենի և ռուսերենի իմացությունը ցանկալի է: Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման իրականացման կարողություններ: |

* *ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Մ. Խորենացու 162ա
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018004821
ՀՎՀՀ 02509478

Տնօրեն ---------------- Մ. Հայրապետյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

Քաղաքացի Մարգարիտա Վարդանյան
ք. Երևան ք. Երևան,Ֆուչիկի փ.,2 4.,բն. 11
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
Անձնագիր AN 0589631
Տրված 26.07.2013թ., 012-ի կողմից
Սոցիալական քարտի համար6503750404
Հ/Հ 163009476033

Քաղաքացի---------------- Մ.Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.